**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-26/1**

ք. Երևան «___» _______ 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Բրիդջ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Նարեկ Չախոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 աշխատանքային** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 աշխատանքային օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 181038000 (մեկ հարյուր ութսունմեկ միլիոն երեսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների

բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՎՀՀ 02698732
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ ------------------------------------------

**Գլխավոր քարտուղար**

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=•••••••••,
givenName=•••••••,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK
5610800161
Дата: 2026.07.09 16:58:36 +04'00'

------------------------------------ **Հ. Հակոբյան**

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Բրիդջ» ՍՊԸ
Հասցեն՝ Ք.Երևան, Աշտարակի խճուղի 30
ՀՎՀՀ՝ 00143175
Էլ.փոստ narekzvuk@gmail.com
Հեռ:094573200
Բանկ՝ Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2050922023451001

**Տնօրեն՝**

Siranush Simonyan
6408750060
Siranush Simonyan 6408750060
Jul 9 2026 3:41 PM

---------------------------------- **Ն.Չախոյան**

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*«       »              20  թ. կնքված*
*«ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-26/1»  ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր քանակը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | մատակարարման | |
| | | | | | | | | հասցեն | Ժամկետը |
| 1 | 32331610/506 | թատրոնի բեմի ձայնային համակարգ | Թատրոնի բեմի ձայնային համակարգը բաղկացած է բարձրախոսներից, ուժեղացուցիչներից, ձայնի ղեկավարման վահանակից, ձայնագության համար նախատեսված պարագաներից, խոսափողներից, ամրակային դետալներից և փոխարկիչներից, որոնք պետք է համապատասխանեն կից ներկայացված **տեխնիկական առաջադրանք-1-ին**: Եթե անհրաժեշտություն առաջանա, Մատակարարը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով տրամադրել տեխնիկական առաջադրանք-1-ում չնշված՝ լրացուցիչ սարքեր, սարքավորումներ, մասեր և պարագաներ, որ սույն համակարգը գործի: Երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից:  Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը, ծրագրավորումը, փորձարկումը, համակարգի գործարկումը, ինչպես նաև համապատասխան մասնագետի հրահանգավորումը իրականացվում է Մատակարարի կողմից: Համակարգում ներառվող սարքերը, սարքավորումները, մասերը և պարագաները (ներառյալ դրանցում կիրառվող տեխնոլոգիաները) պետք է լինեն համատեղելի միմյանց հետ: Ապրանքների տեղաբաշխումը, լարանցումները և գունային լուծումները պետք է համաձայնեցնել գնորդի հետ՝ կապված տարածքի առանձնահատկություններից: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ տեղաբաշխման, | **լրակազմ** | 1 | 181038000 | 181038000 | Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն, հասցե՝ ՀՀ Երևան Վազգեն Սարգսյան փող., 7 շենք | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 100-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | լարանցումների և գունային լուծումների հնարավոր տարբերակներին: Վաճառողը պարտավոր է գործիքազննողական ուսումնասիրության ենթարկել թատրոնի դահլիճում գործող էլեկտրասնուցման ներքին ցանցը (անհրաժեշտության դեպքում նաև արտաքին) և անհրաժեշտության դեպքում փոխարինել համապատասխան հաղորդալարերով և էլեկտրատեխնիկական սարքավորումներով՝ սույն չափաբաժնի ապրանքների համար էլեկտրատեղակայանքների կառուցման կանոններին համապատասխան: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ թատրոնի դահլիճում գործող էլեկտրասնուցման ներքին ցանցին: Լրակազմում առաջարկվող սարքերը պետք է համապատասխանեն հետյալ ստանդարտներից որևէ մեկին. CE Marking (Conformité Européenne), EN 60065, EN 55032, EN 55035, EN 300 328, EN 301 489, EN 62368-1, IEC 62321, ինչպես նաև հետևյալ ստանդարտներից որևէ մեկին. UL Certification (Underwriters Laboratories), FCC Certification, CSA (Canadian Standards Association) Certification, IC (Industry Canada) Certification, UKCA Marking (UK Conformity Assessed), BS (British Standards), Ofcom Certification, PSE Mark (Product Safety Electrical Appliance & Materials), TELEC Certification (Radio Law Certification), JIS (Japanese Industrial Standards): Տեխնիկական բնութագրերից թույլատրվում է շեղում, եթե շեղումը պահպանում է ձայնային որակը ամբողջ դահլիճում, որը նմուշների հաստատման փուլում հիմնավորվում է էլեկտրաակուստիկ և ակուստիկ հաշվարկային գծագրերի միջոցով՝ համաձայնեցնելով Գնորդի հետ: | | | | | | |

**ԳՆՈՐԴ**

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=• • • • • • • • ,
givenName=• • • • • • ,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2026.07.09 16:59:02 +04'00'

-------------------------------------- **Հ. Հակոբյան**

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Siranush Simonyan 6408750060

Siranush Simonyan 6408750060
Jul 9 2026 3:41 PM

-------------------------------------------- **Ն.Չախոյան**

/ստորագրություն/

Կ.Տ

| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔ-1 | | | |
|---|---|---|---|
| N/N | անվանումը/տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | քանա-կը |
| 1 | 2 | 3 | 4 |
| | **1. Բարձրախոսներ և ուժեղացուցիչներ** | | |
| **1.1** | Միջին և բարձր հաճախականությունների բարձրախոս ուժեղարարով կամ առանց ուժեղարարի: Բարձրախոսները պետք է կիրառելի լինեն ինչպես կախելու, այնպես էլ դնելու համար, երկու դեպքում էլ պետք է հագեցած լինի տարբեր աստիճանների անկյունային բացվածքի պարագաներով: Տեղադրումը պետք է իրականացնել ըստ էլեկտրաակուստիկ և ակուստիկ հաշվարկային գծագրերի: Հաճախականությունների տիրույթը (+/-3 dB) սկսած 60 Hz – մինչև 18 kHz: Ձայնի բացվածքը հորիզոնական 90-110° ուղղահայաց 8-10° Առավելագույն ձայնային ճնշումը SPL 140 dB ներառյալ: AVB կամ Dante ազդանշանային համակարգով կառավարվող (Ուժեղարարները) կամ ներկառուցված AVB կամ Dante ազդանշանային համակարգով: Բաղկացուցիչ մասեր՝ միջին ցածր հաճախականության երկու բարձրախոսով 10”-12" ** դույմ չափսերի, ինչպես նաև բարձր հաճախականության մեկ կամ երկու բարձրախոսով 1.4”-4" ** դույմ չափսերի: Meyer sound արտադրողի Meyer sound ֆիրմային անվանման Panther մոդել կամ համարժեք L-acoustics արտադրողի L-acoustics ֆիրմային անվանման K3 մոդել, D&B արտադրողի D&B ֆիրմային անվանման V12 մոդել, Adamson systems արտադրողի Adamson systems ֆիրմային անվանման CS10 կամ IS10 մոդելներ, EAW արտադրողի EAW ֆիրմային անվանման NTX210L մոդել, Martin Audio արտադրողի Martin Audio ֆիրմային անվանման Wavefront Precision WPC մոդել: | հատ | 16 |
| **1.2** | Ցածր հաճախականությունների բարձրախոս ուժեղարարով կամ առանց ուժեղարարների: Բարձրախոսները պետք է կիրառելի լինեն ինչպես կախելու, այնպես էլ դնելու համար: Տեղադրումը պետք է իրականացնել ըստ էլեկտրաակուստիկ և ակուստիկ հաշվարկային գծագրերի: Հաճախականությունների տիրույթը (+/-3 dB) 30 Hz - 100 Hz: Առավելագույն ձայնային ճնշումը SPL 130 dB ներառյալ: AVB կամ Dante ազդանշանային համակարգով կառավարվող (Ուժեղարարները) կամ ներկառուցված AVB կամ Dante ազդանշանային համակարգով: Բաղկացուցիչ մասեր՝ մեկ հատ ցածր հաճախականությունների 17”-22” ** դույմ չափսերի: Meyer sound արտադրողի Meyer sound ֆիրմային անվանման 900 LFC մոդել, կամ համարժեք L-acoustics արտադրողի L-acoustics ֆիրմային անվանման SB18 մոդել, L-ACOUSTICS արտադրողի L-ACOUSTICS ֆիրմային անվանման KS21 մոդել, D&B արտադրողի D&B ֆիրմային անվանման V-SUB մոդել, Adamson systems արտադրողի Adamson systems ֆիրմային անվանման CS119 կամ IS119 մոդելներ, EAW արտադրողի EAW ֆիրմային անվանման SBX118F մոդել, Martin Audio արտադրողի Martin Audio ֆիրմային անվանման SX Series SXCF118 մոդել: | հատ | 8 |
| **1.3** | 1.1, 1.2, կետերի բարձրախոսների համար նախատեսված ուժեղացուցիչների կառավարման համակարգի ամբողջական հավաքածու, որը հագեցված է նորագույն տեխնոլոգիաներով, ինչպիսիք են Dante կապի համակարգը, AVB համակարգը: Նաև հագեցած է բազային ծրագրերով, որոնք հսկում են բարձրախոսների միացումների ճշտությունը, ինչպես նաև ճշգրիտ հզորության բեռնվածությունը, որպեսզի մաքսիմում արդյունք ստացվի առանց բարձրախոսին վնասելու: Պետք է հագեցած լինի նաև հոսանքի բաշխիչ և կարգավորիչ համակարգով, որը թույլ չի տալիս սխալ լարման կամ սխալ միացումների դեպքում ուժեղարարների միացումը: Հագեցած է նաև ազդանաշանային և ցանցային բաշխիչ սարքավորումներով, որոնցով հնարավոր կլինի բարձրախոսների կառավարումը ոչ թէ ամբողջական, այլ առանձին մեկ բարձրախոսի ճշտությամբ: Յուրաքանչյուր սխեմատիկ | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | միացումների ճշտությունը պետք է պլանավորված և միակցված լինի ըստ նախորոք գծագրված և պլանավորված հաշվարկային սխեմայի՝ օգտագործելով միայն բարձրորակ մալուխներ: Համակարգերը պետք է հաշվարկված լինեն ըստ բարձրախոսների քանակի, անհրաժեշտ է հաշվարկել նաև առաջարկվող համակարգին համապատասխան ուժեղացուցիչների քանակը ըստ նախորոք տրված էլեկտրաակուստիկ հաշվարկների նախագծի: L'acoustic արտադրողի L'acoustic ֆիրմային անվանման LA-RAK 2 AVB (ըստ քանակի) մոդել կամ համարժեք Adamson systems արտադրողի Adamson systems ֆիրմային անվանման E-Rack (ըստ քանակի) մոդելը, Adamson systems արտադրողի Adamson systems ֆիրմային անվանման CS-Rack (ըստ քանակի) մոդել, D&B արտադրողի D&B ֆիրմային անվանման Rack (ըստ քանակի) մոդելը, Meyer sound արտադրողի Meyer sound անվանական Galileo Galaxy 816 մոդելը, EAW արտադրողի EAW ֆիրմային անվանման Resolution Software մոդելը, Martin Audio արտադրողի Martin Audio ֆիրմային անվանման Rack IK42RACK 02-UK մոդել: Ակտիվ բարձրախոսների դեպքում պետք է կիրառել միայն կառավարման և ցանցի համակարգերը, ոչ ակտիվ բարձրախոսների դեպքում պետք է հաշվի առնել, որ ուժեղարարները պետք է առաջադրված լինեն առաջարկվող բարձրախոսների արտադրողների կողմից: | | |
| **1.4** | Կախիչներ նախատեսված բարձրախոսների կախելու համար | հատ | 4 |
| **1.5** | Ուժեղարարներ բեմի բարձրախոսների համար (ակտիվ բարձրախոսների դեպքում տվյալ տողի գումարը գումարվում է 1.6 կետում գտնվող բարձրախոսների տողին) Ուժեղարարները պետք է հագեցած լինեն Dante կամ AVB ազդանշանային ղեկավարման համակարգով, ինչպես նաև պետք է ունենան առանձին մուտքերը և ելքերը կառավարող պրոցեսորներ, որոնք էլ իրենց հերթին պետք է հագեցած լինեն ձայնի ապահովման դինամիկ կառավարումով յուրաքանչյուր մուտքի և ելքի համար: Ուժեղարարը պետք է ունենա 4 ելք և հաշվարկված պետք է լինի նախօրոք ընտրված բարձրախոսի հզորության հետ: | հատ | 3 |
| **1.6** | Ընդհանուր հաճախականության բարձրախոսներ նախատեսված բեմում ելույթ ունեցողների համար: Հաճախականությունների տիրույթը (+/-3 dB) 50 Hz - 18 kHz անկյունային բացվածքը (-6 dB) H x V 40-60° ** x 40-60° **: Առավելագույն ձայնի ճնշումը, 137.3 dB ներառյալ: Բաղկացուցիչ մասեր՝ մեկ հատ ցածր հաճախականությունների 2X10" կամ 1X15" և մեկ հատ 1.5-3" ** դույմ չափսերի բարձրախոսներ: Meyer sound արտադրողի Meyer sound ֆիրմային անվանման MJF210 մոդել կամ համարժեք L-acoustics արտադրողի L-acoustics ֆիրմային անվանման X15 HiQ մոդել, D&B արտադրողի D&B ֆիրմային անվանման MAX 2 մոդել, Adamson systems արտադրողի Adamson systems ֆիրմային անվանման M 15 մոդել, EAW արտադրողի EAW ֆիրմային անվանման MW15 մոդել, Martin Audio արտադրողի Martin Audio ֆիրմային անվանման CDD Live-15 CDDLYA15B մոդել: | հատ | 12 |
| **1.7** | Բարձրախոսներ նախատեսված ձայնադրման և ձայնագրման սենյակների կահավորման համար: Հաճախականությունների տիրույթը (+/-3 dB) 40 Hz – 22 kHz: Հզորությունը՝ 350-500 ** watt: Առավելագույն ձայնի ճնշումը SPL100 dB ներառյալ: Բաղկացուցիչ մասեր՝ մեկ հատ ցածր հաճախականությունների 7-10" ** բարձրախոս և մեկ հատ 0.5-1.5" ** դույմ չափսերի բարձրախոս: Բարձրախոսները պետք է նախատեսված լինեն ձայնագրման ստուդիայում աշխատելու համար: | հատ | 2 |
| **1.8** | Հատուկ մալուխներ բարձրախոսների համար, որը նախորոք հաշվարկված կլինի սխեմատիկ պլանավորման մեջ, ինչպես նաև պետք է հաշվի առնել կցորդիչների քանակը տեսակը: Մալուխները պետք է լինեն ճկուն, հրակայուն և պետք է ունենան տվյալ սարքավորումներին համապատասխան որակավորում: Ինչպես նաև պետք է հաշվի առնել սխեմայով նախատեսված մալուխների դիմադրույան և բեռնվածության չափորոշիչները: Պետք է հաշվի առնել նաև կցորդիչներ բարձրախոսները միացնելու համար: | հատ | 1 |
| **1.9** | Շարժիչներ բարձրախոսները կախելու համար, երկու արգելակով 500kg D8+ տեսակի: Prolift արտադրողի Prolift ֆիրմային անվանման NERO hoist 500 մոդել, կամ համարժեք Prolift արտադրողի Prolift ֆիրմային անվանման PNE-500DC-30 մոդել Chainmaster արտադրողի Chainmaster ֆիրմային անվանման SK030/10-500 մոդել, ChainMaster արտադրողի ChainMaster ֆիրմային անվանման D8+ Ultra DC 500kg մոդել, stagemaker արտադրողի stagemaker ֆիրմային անվանման SLS D8+ 500 մոդել, | հատ | 8 |

| | | | |
|---|---|---|---|
| | movecat արտադրողի movecat ֆիրմային անվանման pluslite D8+ 500 մոդել, GIS արտադրողի GIS ֆիրմային անվանման LP500/NL D8+ մոդել: | | |
| **1.10** | Շարժիչների կառավարման համակարգ իր մալուխներով: | հատ | 1 |
| **1.11** | Հատուկ ճոպաններ 2m 1 ton | հատ | 20 |
| **1.12** | Անկյունների թեքման համար նախատեսված հատուկ կախիչներ մեծ անկյուններ ստանալու համար | հատ | 2 |
| **1.13** | Օմեգայաձև փական նախատեսված հատուկ ճոպանների համար 3.25 T | հատ | 20 |
| **1.14** | Հոսանքի բաշխիչ կայան | հատ | 2 |
| | **2. Ձայնի ղեկավարման վահանակ ձայնագրության հնարավորությամբ** | | |
| **2.1** | Թատրոնում առկա (Allen&heath Avantis) ձայնի թվային ղեկավարման վահանակի հարակից մուտքեր և ելքեր ապահովող սարքեր առնվազն 16 անալոգային մուտքով և 8 անալոգային ելքով: Սարքը պետք է հնարավորություն ունենա միանալու ձայնային թվային ղեկավարման այլ սարքերի հետ և համակցված աշխատելու դրանց հետ: | հատ | 2 |
| **2.2** | Թատրոնում առկա (Allen&heath Avantis) ձայնի թվային ղեկավարման վահանակի հարակից թվային մուտքեր և ելքեր ապահովող սարք, որը ապահովում է 128 թվային մուտք և 128 թվային ելք MADI տեսակի համակարգով | հատ | 1 |
| | **3. Ձայնագության համար նախատեսված պարագաներ** | | |
| **3.1** | Ազդանշանային մալուխ CAT 7A նախատեսված AVB և Dante ազդանշանային համակարգով աշխատելու համար | հատ | 500 |
| **3.2** | Ձայնագրման համար նախատեսված արտաքին սարքավորում, որը պետք է հնարավորություն ունենա 192 թվային մուտքի և ելքի, պետք է հագեցած լինի թվային MADI համակարգով, ինչպես նաև պետք է ունենա անալոգային մուտքեր: Պետք է հագեցած լինի թվային հաճախականության կարգավորիչով: | հատ | 1 |
| **3.3** | Ձայնագրման ծրագիր: Ծրագիրը պետք է ունենա հնարավորություն 128 մուտք ձայնագրելու համար: Ծրագրի հետ տրամադրվում է նաև լիցենզիոն բանալին: Այն տեղադրվում է համակարգչում, և համապատասխան սարքերը միացվում են ծրագրին: Cubase արտադրողի Cubase ֆիրմային անվանման Pro 14 մոդել կամ համարժեք Steinberg արտադրողի Steinberg ֆիրմային անվանման Nuendo 13 մոդել, Avid արտադրողի Avid ֆիրմային անվանման Pro Tools v9 մոդել: | հատ | 1 |
| **3.4** | Դյուրակիր համակարգիչ նախատեսված ձայնագրման և վարելու համար: Նվազագույնը 12 core CPU-ով, 15-ից 15.6դյույմ էկրանով, 32 ԳԲ օպերատիվ հիշողությամբ և 1 ՏԲ SSD տեսակի հիմնական հիշողությամբ: | հատ | 1 |
| | **4. Խոսափողներ, ամրակային դետալներ և փոխարկիչներ** | | |
| **4.1** | Խոսափող նախատեսված հարվածային գործիքների համար, որը օգտագործվում է մեծ թմբուկի ներսում տեղադրելու համար: Հաճախականությունների ճանաչելիությունը 20hz-20Khz Shure արտադրողի Shure ֆիրմային նշանի beta 91A մոդելի կամ Sennheiser արտադրողի Sennheiser ֆիրմային նշանի E901 մոդելի կամ Bayerdinamic արտադրողի Bayerdinamic ֆիրմային նշանի TG D71 մոդելի: | հատ | 1 |
| **4.2** | Խոսափող նախատեսված երաժշտական գործիքների համար, դինամիկ նեղ կարդիոիդ մեմբրանով հաճախականությունների ճանաչելիությունը 40hz-18Khz: SHURE արտադրողի SHURE ֆիրմային նշանի beta 56 , 57 մոդելի կամ Sennheiser արտադրողի Sennheiser ֆիրմային նշանի E904 մոդելի կամ Audix արտադրողի Audix ֆիրմային նշանի D4 մոդելի: | հատ | 6 |
| **4.3** | Խոսափողներ բազմաֆունկցիոնալ իրենց ամրակային դետալներով նախատեսված լարային, հարվածային, փողային գործիքների ուղիղ ձայնադրման համար, գործիքների վրա փակցվող տարբերակներով, կոնդեսատորային կարդիոիդ մեմբրանով հաճախականությունների ճանաչելիությունը 20hz-20Khz կամ ավելին, ինչպիսիք են DPA արտադրողի DPA ֆիրմային նշանի 4099 | հատ | 10 |

| | | | |
|---|---|---|---|
| | մոդելը կամ համարժեք Neumann արտադրողի Neumann ֆիրմային նշանի MCM 114 մոդելը, Countryman արտադրողի Countryman ֆիրմային նշանի I 2 մոդելը տարբեր բռնակներով: | | |
| **4.4** | Խոսափողներ նախատեսված ընդհանուր ձայնադրման և ձայնագրման համար: Կոնդեսատորային կարդիոիդ մեմբրանով հաճախականությունների ճանաչելիությունը 20-20 khz կամ ավելին ինչպիսիք են Neumann արտադրողի Neumann ֆիրմային նշանի KM 184 մոդելը կամ համարժեք Sennheiser արտադրողի Sennheiser ֆիրմային նշանի MKH 8040 մոդելը, DPA արտադրողի DPA ֆիրմային նշանի 2015 մոդելը, DPA արտադրողի DPA ֆիրմային նշանի 4011A Cardioid Mic մոդելը, TELEFUNKEN արտադրողի TELEFUNKEN ֆիրմային նշանի M60Fet Cardioid մոդելը: | հատ | 6 |
| **4.5** | Թվային հեռակառավարվող խոսափողների կոմպլեկտ, որը բաղկացած է ինչպես ձեռքի բռնելու համար այնպես էլ առանձին հաղորդիչից, որին ամրացվում է գլխին դրվող խոսափող: Տվյալ կոմպլեկտը պետք է հագեցած լինի ձեռքի խոսափողով: Հեռակառավարվող խոսափողների ալեհավաքների հաճախականությունների տիրույթը պետք է լինի 400-650 mhz տիրույթում: Խոսափողների մոդելներն են SHURE արտադրողի SHURE ֆիրմային նշանի ULXD124 և beta58 ձեռքի խոսափող մոդելների համալիրը, կամ համարժեք SHURE արտադրողի SHURE ֆիրմային նշանի ULXD4 և ULXD2/B58 և ULXD1 ձեռքի խոսափող մոդելների համալիրը, Sennheiser արտադրողի Sennheiser ֆիրմային նշանի EW-DX MKE2 և EW-DX SKM-S/MMD 835 և EW-DX SK կամ HSP Essential մոդելների համալիրը, Wisycom արտադրողի Wisycom ֆիրմային նշանի MRK 980 MTH 610 և MTP 61 XL մոդելների համալիրը: | լրակազմ | 8 |
| **4.6** | Հեռակառավարվող խոսափողների համար նախատեսված ալեհավաքների ընդունիչ բաշխիչ սարք նախատեսված SHURE արտադրողի SHURE ֆիրմային նշանի ULXD124 և beta58 ձեռքի խոսափող մոդելների համալիրի, կամ համարժեք SHURE արտադրողի SHURE ֆիրմային նշանի ULXD4 և ULXD2/B58 և ULXD1 ձեռքի խոսափող մոդելների համալիրի, Sennheiser արտադրողի Sennheiser ֆիրմային նշանի EW-DX MKE2 և EW-DX SKM-S/MMD 835 և EW-DX SK կամ HSP Essential մոդելների համալիրի, Wisycom արտադրողի Wisycom ֆիրմային նշանի MRK 980 MTH 610 և MTP 61 XL մոդելների համալիրի համար: | հատ | 2 |
| **4.7** | Ուղղորդված ալեհավաքներ նախատեսված SHURE արտադրողի SHURE ֆիրմային նշանի ULXD124 և beta58 ձեռքի խոսափող մոդելների համալիրի, կամ համարժեք SHURE արտադրողի SHURE ֆիրմային նշանի ULXD4 և ULXD2/B58 և ULXD1 ձեռքի խոսափող մոդելների համալիրի, Sennheiser արտադրողի Sennheiser ֆիրմային նշանի EW-DX MKE2 և EW-DX SKM-S/MMD 835 և EW-DX SK կամ HSP Essential մոդելների համալիրի, Wisycom արտադրողի Wisycom ֆիրմային նշանի MRK 980 MTH 610 և MTP 61 XL մոդելների համալիրիհամար: | հատ | 4 |
| **4.8** | Գլխին ամրացվող խոսափող (մարմնագույն) պետք է ընտրել այնպիսի խոսափող որը համատեղելի կլինի վերը նշված հեռակառավարվող համակարգերի հետ աշխատելու համար: Խոսափողները պետք է ունենան (omnidirectional) ուղվածություն ինչպիսիք են DPA արտադրողի DPA ֆիրմային նշանի 6060, 4660 մոդելները, կամ համարժեք DPA արտադրողի DPA ֆիրմային նշանի 4066-OP-A-F90-LH մոդելը, Sanken արտադրողի Sanken ֆիրմային նշանի COS-11D R-*1-*2 մոդելը, Countryman արտադրողի Countryman ֆիրմային նշանի SKU B3 +TA4F connector մոդելը, Sennheiser արտադրողի Sennheiser ֆիրմային անվանման HSP ESSENTIAL մոդելը: | հատ | 20 |
| **4.9** | Ձայնային ազդանշանի ոչ բալանսավորված ազդանշանը բալանսավորվածի փոխակերպող երկու մուտքով և երկու ելքով պասիվ արտաքին չսնուցվող  սարք: | հատ | 8 |
| **4.10** | Ձայնային ազդանշանը կողմնակի ազդանշաններից պաշտպանող  մեկուսիչ սարք իր առանձին անջատիչներով: | հատ | 10 |
| **4.11** | Ձայնային ազդանշանի մալուխ 0.5մմ միջուկների չափսերով, հատուկ ճկվող թաղանթով արտաքին ազդեցություններից պաշտպանող ցանցով: Մալուխը պետք է լինի հայտնի եվրոպական արտադրողներից և պետք է փաթեթավորված լինի 100 մետրանոց փաթույթներով: | հատ | 10 |

| | | | |
|---|---|---|---|
| **4.12** | Ձայնային ազդանշանի կցորդիչ սև գույնի 3 ոտքով խրոցակավոր տեսակով նախատեսված ձայնային ազդանշանի մալուխների համար: Neautrik արտադրողի Neautrik ֆիրմային նշանի NC3MXX մոդել կամ համարժեք AMPENHOL արտադրողի AMPENHOL ֆիրմային նշանի AMPENHOL մոդել, Seetronic արտադրողի Seetronic ֆիրմային նշանի Seetronic մոդել: | հատ | 200 |
| **4.13** | Ձայնային ազդանշանի կցորդիչ սև գույնի 3 ոտքով վարդակաոր տեսակով նախատեսված ձայնային ազդանշանի մալուխների համար: Neautrik արտադրողի Neautrik ֆիրմային նշանի NC3FXX մոդել կամ համարժեք AMPENHOL արտադրողի AMPENHOL ֆիրմային նշանի AMPENHOL մոդել, Seetronic արտադրողի Seetronic ֆիրմային նշանի Seetronic մոդել: | հատ | 200 |
| **4.14** | Խոսափողների համար նախատեսված երկար կանգնակներ ուղիղ հիմքեվ  ինչպիսք են K&M 26075 կամ նմանատիպ HERCULES, Gravity տեսակի | հատ | 10 |
| **4.15** | Թատրոնի բեմահարթակի մոտ գտնվող էներգետիկ հանգույցների վերանորոգում, փոխարինում, վերազինում նորով նախորոք համաձայնեցնելով թատրոնի լուսավորման բաժնի ղեկավարի հետ: | հատ | 1 |
| **4.16** | Ներքին կապի համակարգ հեռակառավարվող բաշխիչ կայանով և 12 ընդունիչներով, որոնք առանձին հագեցած կլինեն 4 առանձին ալիքներով: | հատ | 1 |

**ԳՆՈՐԴ**

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=•••••••••,
givenName=••••••,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2026.07.09 16:59:25 +04'00'

-------------------------------------- **Հ. Հակոբյան**

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Siranush Simonyan 6408750060
Siranush Simonyan 6408750060
Jul 9 2026 3:42 PM

-------------------------------------- **Ն.Չախոյան**

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«    »        20  թ. կնքված*
*«ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՊՁԲ-26/1» ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեից պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով:* | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 32331610/506 | թատրոնի բեմի ձայնային համակարգ | | | | | | | | | | | | | 181038000 |

** Վճարման ենթակա գումարները նշվում են աճողական կարգով:*

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=•••••••••,ԳՆՈՐԴ
givenName=•••••••,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2026.07.09 16:59:51 +04'00'

---------------------------------- **Հ. Հակոբյան**
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

Siranush Simonyan
6408750060
Siranush Simonyan 6408750060
Jul 9 2026 3:42 PM
CoSign

---------------------------------- **Ն.Չախոյան**
/ստորագրություն/
Կ.Տ